ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

Հայոց լեզվի և գրականության
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ՝ Բաբուդյան Հ. Ռ.

Արձանագրություն № __2__

«__12__» __սեպտեմբեր__ 2023 թ.

ՀԼԳ/բ-165 «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ (ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ)» ԴԱՍԸՆԹԱՑԻ

Դասիչ, դասընթացի անվանում

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝ 011301.00. 6 Ընդհանուր մանկավարժություն
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ 011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ Մանկավարժության բակալավր
/բակալավր, մագիստրատուրա/

Ամբիոն՝ Հայոց լեզվի և գրականության
/ամբիոնի լրիվ անվանումը/

Ուսուցման ձևը՝ առկա//հեռակա
/առկա, հեռակա/

Կուրս/կիսամյակ 4-րդ կուրս, 1-ին կիսամյակ

Դասախոս(ներ) ՝ Հ. Հարությունյան, բ.գ.թ., դոցենտ
/անուն, ազգանուն/

Էլ. հասցե/ներ՝ harutyunyanhasmikp@yandex.ru

Վանաձոր- 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում
2. Դասընթացի նպատակը և խնդիրները
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը
7. Ուսումնական աշխատանքները տեսակները
8. Դասավանդման մեթոդներ
9. Ուսումնառության մեթոդները
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ
    - 12.1 Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ
    - 12.2 Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ
    - 12.3 Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում
14. Գնահատում
    - 14.1 Ուսանողների գիտելիքների ստուգում
    - 14.2 Հարցաշար
    - 14.3 Գնահատման չափանիշներ
15. Դասընթացի համառոտ նկարագրիչ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում[1]

«Հայոց լեզու (շարահյուսություն)» դասընթացը կարևորվում է հանրակրթության բնագավառում տարրական դասարանների ուսուցիչների պատրաստման գործընթացում, ներառված է՝ **011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա** կրթական ծրագրի ուսումնական պլանի «Հիմնական մասնագիտական» կրթամասում:

2. Դասընթացի նպատակը և խնդիրները.

2.1. Դասընթացի նպատակն է մասնագիտական հիմնարար գիտելիքներով, տեսական և գործնական-կիրառական կարողություններով և հմտություններով ապագա ուսուցչին, գիտնական-հետազոտողին զինելը:

2.2. Դասընթացի խնդիրներն են.

- Սովորեցնել դասընթացի տեսական հիմքերը:
- Բացատրել ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգի օրինաչափությունները:
- Ամրապնդել ուսանողների կողմից ձեռքբերված տեսական գիտելիքները գործնական իրավիճակային խնդիրներով:
- Սովորեցնել ուսանողներին կատարել հետազոտություններ և կատարել եզրահանգումներ ըստ արդյունքների:
- Սովորեցնել ուսանողներին վերլուծել ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգի առանձնահատկությունները, ճանաչել և բացատրել դրանք համատեքստում:

3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները

«Հայոց լեզու (շարահյուսություն)» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների՝ հայերենի կառուցվածքային նախընաց մակարդակների վերաբերյալ գիտելիքների, կարողությունների, հմտությունների առկայությունը:

4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը[2] և /կամ կոմպետենցիաները.

«Հայոց լեզու (շարահյուսություն)» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

1. իմանա հայերենի շարահյուսության տեսական հիմունքները,
2. իմանա հայերենի շարահյուսության ուսումնասիրման մեթոդական հիմքերը
3. կարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
4. տիրապետի լեզվաբանական հետազոտության մեթոդներին,

---

[1] Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների:

[2] http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf

Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

5. կարողանա մասնագիտական գիտելիքների շրջանակներում կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.

Ա) Ընդհանրական կոմպետենցիաներ

Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝

ԳԿ4 մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,

ԳԿ8.տեղեկատվությունը կառավարելու ունակություն (տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու ունակություն),

ԳԿ9 խնդիրների լուծում:

Միջանձնային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝

ՄՁԿ2 թիմային աշխատանք,

ՄՁԿ4 միջառարկայական թիմում աշխատելու ունակություն:

Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝

ՀԳԿ1 գիտելիքները գործնականում կիրառելու ունակություն,

ՀԳԿ2 հետազոտություններ կատարելու ունակություններ,

ՀԳԿ8 ինքնուրույն աշխատելու ունակություն:

Բ)Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)

ԱԿ3համապատասխան համատեքստում ընկալել և մեկնաբանել նոր տեղեկատվությունը,

ԱԿ4 ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,

ԱԿ6 կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները:

Ուսուցչական կոմպետենցիաներ (ՈՒԿ)՝

ՈւԿ4 առարկայական գիտելիքներին տիրապետելու կարողություն ,

ՈւԿ9 համագործակցության միջոցով միջառարկայական խնդիրներ լուծելու կարողություն:

5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների[3].

«Հայոց լեզու (շարահյուսություն)» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել դպրոցում մասնագիտական գործունեության ընթացքում, բարձրագույն կրթության երկրորդ շրջափուլի ընթացքում, նաև ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և գիտահետազոտական աշխատանքի բնագավառում գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

[3] Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել:

Չափանիշ	Առկա ուսուցման համակարգ
Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ)	**4 կրեդիտ/120 ժամ**

Աշխատանքի տեսակը	ժամաքանակ
Դասախոսություն	22
Գործնական աշխատանք	20
Ինքնուրույն աշխատանք	78
Ընդամենը	120
Ստուգման ձևը (ստուգարք/ **ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն)**	Երկու ընթացիկ գրավոր քննություն

7. **Ուսումնական աշխատանքների տեսակները**[4]

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:
- **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, խմբային աշխատանքների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:

[4] Թողնել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

  Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են[5]՝
  - **Ռեֆերատ** – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
  - **Կլոր սեղան** – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
  - **Կոնկրետ իրավիճակների վերլուծություն** – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենաարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:
  - **Նախագծերի մեթոդ** – ուսումնաճանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է, սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծման կամ որոշակի արդյունքի ձևակերպման:
  - **Ինքնուրույն աշխատանք համացանցում** – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:

8. **Դասավանդման մեթոդներներն են՝** հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-քննարկում, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, իրավիճակային խնդիրների վերլուծություն:

9. **Ուսումնառության մեթոդներն են՝** մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում:

[5] Թողնել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների[6].

հ/հ	Թեմա (բաժին)	Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների				
		դասախոսություն	սեմինար պարապմունք	գործնական աշխատանք	լաբորատոր աշխատանք	Ինքնուրույն աշխատանք
1.	Բարդ նախադասությունը և նրա կառուցվածքը:	2	-	2	-	5
2.	Բարդ համադասական նախադասություն: Միավորական հարաբերությամբ բարդ համադասական նախադասություններ:	2	-	2	-	10
3	Ներհակական, տրոհական, հավելական հարաբերությամբ բարդ համադասական նախադասություններ:	3	-	2	-	8
4	Բարդ ստորադասական նախադասության կառուցվածքը և իմաստային առանձնահատկությունները:	2	-	2	-	5
5	Բարդ ստորադասական նախադասության տեսակներն ըստ շարահյուս. փոխհարաբերության:	2	-	2	-	10
6	Նախադաս. գլխավոր անդամներին փոխարինող երկրորդ. նախադաս.:	3	-	2	-	10
7	Նախադաս. երկրորդ. անդամներին փոխարինող երկրորդ. նախադաս. գոյականական անդամի լրացում երկրորդ. նախադասություններ:	3	-	2	-	10
8	Բայական անդամի խնդիր լրացում երկրորդ. նախադասություններ:	2	-	2	-	10
9	Բայական անդամի լրացում երկրորդ. նախադասություններ: Ամբողջ գլխավոր նախ.	2	-	2	-	5

[6] Նման է օրացուցային պլանին:

	լրացնող երկրորդական նախադասություններ:					
10	Փոխակերպում:	1	-	2	-	5
ԸՆԴԱՄԵՆԸ		22	-	20	-	78

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

Պարտադիր գրականություն

Հմ.	Հեղինակ	Անվանում	Հրատարակման տարի
2.	Ս. Աբրահամյան	Հայոց լեզու. շարահյուսություն	2004
4.	Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան և այլք	Ժամանակակից հայոց լեզու	1976
5.	Գ. Գարեգինյան	Ժամանակակից հայոց լեզու: Բարդ նախադասություն	1984
6.	Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան	Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն	2003

Լրացուցիչ գրականություն

Հմ.	Հեղինակ	Անվանում	Տարի

	Ա. Պապոյան	Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ	2004
	Լ. Թելյան	Բազմաբաղադրիչ բարդ նախադասությունների դասակարգման շուրջ	http://www.armin.am/images/menus/2592/Leonid_Telyan.pdf

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

	Թեմա	Անցկացման տեսակը, ձևը և մեթոդը, ժամաքանակը – առկա // հեռակա	Դասախոսության ընթացքում ուսումնասիրվող հարցը	Դասախոսության թեմային վերաբերող գրականություն, տեղեկատվական նյութեր
1.	Գաղափար բարդ նախադասության մասին:	Հիմնահարցային դասախոսություն 2/1	1.Նախադասությունը իբրև մտածողության և հաղորդակցության միջոց: 2. Պարզ և բարդ նախադասությունների տարբերակումը ըստ ստորոգման:	ՊԳ 1, 2, 5
2.	Բարդ համադասական նախադասությ ուն:	Հիմնահարցային դասախոսություն 2/1	1.Բարդ համադասական նախադասության բաղադրիչների կապակցման միջոցներն ու եղանակները 2.Տեսակներն ըստ բաղադրիչ նախադասությունների իմաստային հարաբերության: 3.Բարդ համադասական և ստորադասական նախադասությունների տարբերություններն ու նմանությունները:	ՊԳ 1, 2, 3 , 4, 6

3.	Բարդ ստորադասական նախադասության բնութագիրը, կառուցվածքը և իմաստային առանձնահատկությունները:	Հիմնահարցային դասախոսություն 2/1	1.Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների կապակցման միջոցներն ու եղանակները: 2.Բարդ ստորադասական նախադասության տեսակներն ըստ բաղադրիչների սերտության աստիճանի (մասնատունակ և անմասնատունակ կառուցվածքներ): 3.Բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասության տիպերը:	ՊԳ 1, 2, 3, 6 ԼԳ 2
4.	Բարդ ստորադասական նախադասության տեսակներն ըստ շարահյուս. փոխհարաբերության:	Հիմնահարցային դասախոսություն 2/-	1. Երկրորդական նախադասությունների շարահյուսական գործառույթի որոշման հիմունքները:	ՊԳ 2, 3, 6
5.	Նախադաս. գլխավոր անդամներին փոխարինող երկրորդ. Նախադասություններ:	Հիմնահարցային դասախոսություն 3/1	1.Ենթակա ստորադաս ունեցող բարդ նախ. կառուցվածքային հատկանիշները: 2.Հարաբերյալների գործածությունը գերադասում: 3Գլխավոր նախադասության ստորոգյալի արտահայտությունը: 4.Ստորոգելի երկրորդական նախադասության կապակցումը:	ՊԳ 2, 3, 6,

6.	Գոյականական անդամի լրացում ստորադաս նախադասությամբ բարդ նախադասություններ:	Հիմնահարցային դասախոսություն 2/1	1.Որոշիչ երկրորդական նախ. իմաստակառուցվածքային հատկությունները: 2.Բացահայտիր երկրորդական նախ. իմաստակառուցվածքային հատկությունները: 3.Հատկացուցիչ երկրորդական նախ. իմաստակառուցվածքային հատկությունները:	ՊԳ 2, 3, 6
7.	Բայական անդամի լրացում երկրորդ. նախադասություններ:	Հիմնահարցային դասախոսություն 2/0,5	2.Ուղիղ խնդիր երկրորդական նախադասության իմաստակառուցվածքային հատկությունները: 3.Անուղղակի խնդիր ,երկրորդական նախադասություն ների(հանգման, միջոցի, ներգործող) իմաստակառուցվածքային հատկությունները: 4.Վերաբերության, անջատման, մատուցման, միասնության և այլ անուղղակի խնդիր երկրորդական նախադասությունների իմաստակառուցվածքային առանձնահատկությունները:	ՊԳ 3, 6 ԼԳ 1
8.	Պարագա ստորադաս բաղադրիչով բարդ նախադասություններ: Ամբողջ գլխավոր նախ. լրացնող երկրորդական նախադասություններ:	Հիմնահարցային դասախոսություն 2/-	1.Տեղի, ժամանակի պարագա երկրորդական նախադասության իմաստակառուցվածքային առանձնահատկությունները: 2.Ձևի, չափի պարագա երկրորդական նախադասությունների իմաստակառուցվածքային առանձնահատկությունները: 2.Նպատակի և պայմանի պարագա երկրորդական նախադասությունների իմաստակառուցվածքային	ՊԳ 3, 6,

			առանձնահատկությունները: 3.Պատճառի, հիմունքի, զիջման և հետևանքի պարագա երկրորդական նախադասությունների իմաստակառուցվածքային առանձնահատկությունները: 4.Գլխավոր նախադասությանը հետևանքի նշանակությամբ լրացնող երկրորդական նախ. կառույցներ: 5.Գլխավոր նախադասությանը հարակցական նշանակությամբ լրացնող երկրորդական նախադասություններով կառույցներ:	
9.	Ուղղակի խոսքի փոխակերպումը անուղղակի խոսքի:	Հիմնահարցային դասախոսություն 2/0,5	1.Համաստորադասությամբ բարդ ստորադասական նախադասություն;2.Ենթաստորադասությամբ բարդ ստորադասական նախ.: 3.Խառը տիպի բարդ ստորադասական նախադասություն:	ՊԳ 3 Դասախոսական տեքստ
10.	Բարդ ստորադասական նախադասությունների փոխակերպումը պարզի:	Հիմնահարցային դասախոսություն 2/-	Բարդ ստորադասական նախ. փոխակերպելիս կատարվող կառուցվածքային փոփոխությունները:	ՊԳ 2, 3, 6 ԼԳ 2

12.2.ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՔԱՐՏ

(առկա և հեռակա ուսուցման համակարգեր)

	Թեմա	Դասաժամերին քննարկման ենթակա հարցեր և դասավանդման մեթոդներ	**Ուսումնառության և գնահատման համապատասխան մեթոդներ և հնարներ**		գրավոր և տեղեկատվական գրքեր, թեմ մոտին վերաբերող նյութեր
			Առաջադրանքներ ուսանողներին գործնական պարապմունքներին պատրաստվելու համար	Ստուգման ձև (ինքնաստուգում)	
1	*2*	*3*	*5*	*6*	*7*
1.	Գաղափար բարդ նախադասության մասին:	1.Նախադասությունը իբրև մտածողության և հաղորդակցության միջոց: 2. Պարզ և բարդ նախադասությունների տարբերակումը ըստ ստորոգման:	Թեմային առնչվող գիտելիքների վերհիշում, դասախոսական տեքստի յուրացում:	Բանավոր ստուգում:	ՀԳ 28, 7,19 ԼԳ 7

2.	Բարդ համադասական նախադասություն: Բարդ ստորադասական նախադասության բնութագիրը:	1.Բարդ համադասական նախադասության բաղադրիչների կապակցման միջոցներն ու եղանակները 2.Տեսակներն ըստ բաղադրիչ նախադասությունների իմաստային հարաբերության: 3.Բարդ համադասական և ստորադասական նախադասությունների տարբերություններն ու նմանությունները:	Մշակում և դասախոսական տեքստի յուրացում:	Բանավոր հարցում: Թեստային ստուգում:	ՀԳ1,2,5,7, 10,24,8
3.	Բարդ ստորադասական նախադասության տեսակներն ըստ շարահյուս. փոխհարաբերության:	1. Երկրորդական նախադասությունների շարահյուսական գործառույթի որոշման հիմունքները:	Հանձնարարված գրականության մշակում և դասախոսական տեքստի յուրացում:	Բանավոր հարցում: Թեստային ստուգում:	ՀԳ1,2,5,7,10,8,24
4	Նախադաս. գլխավոր անդամներին փոխարինող երկրորդ. նախադաս.:	1.Ենթակա ստորադաս ունեցող բարդ նախ. կառուցվածքային հատկանիշները: 2.Հարաբերյալների գործածությունը գերադասում: 3Գլխավոր նախադասության ստորոգյալի արտահայտությունը: 4.Ստորոգելի երկրորդական	Հանձնարարված գրականության մշակում և դասախոսական տեքստի յուրացում:	Բանավոր հարցում, թեստային ստուգում:	ՀԳ1,2,5,7, 10,24

		նախադասության կապակցումը:			ՀԳ 5,7,11 ԼԳ 2,6
5.	Գոյականական անդամի լրացում ստորադաս նախադասությամբ բարդ նախադասություններ:	1.Որոշիչ երկրորդական նախ. իմաստակառուցվածքային հատկությունները: 2.Բացահայտիր երկրորդական նախ. իմաստակառուցվածքային հատկությունները: 3.Հատկացուցիչ երկրորդական նախ. իմաստակառուցվածքային հատկությունները:	Հանձնարարված գրականության մշակում և դասախոսական տեքստի յուրացում:	Թիմային աշխատանք: Բանավոր հարցում:	ՀԳ 5,7 ՀԳ 5,7,21 ԼԳ 2,6

6.	Բայական անդամի լրացում երկրորդ. նախադասություններ:	2.Ուղիղ խնդիր երկրորդական նախադասության իմաստակառուցվածքային հատկությունները: 3.Անուղղակի խնդիր ,երկրորդական նախադասություն ների(հանգման, միջոցի, ներգործող) իմաստակառուցվածքային հատկությունները: 4.Վերաբերության, անջատման, մատուցման, միասնության և այլ անուղղակի խնդիր երկրորդական նախադասությունների իմաստակառուցվածքային առանձնահատկությունները:	Հանձնարարված գրականության մշակում և դասախոսական տեքստի յուրացում:		
7.	Պարագա ստորադաս բաղադրիչով բարդ նախադասություններ: Ամբողջ գլխավոր նախ. լրացնող երկրորդական նախադասություններ:	1.Տեղի, ժամանակի պարագա երկրորդական նախադասության իմաստակառուցվածքային առանձնահատկությունները: 2.Չևի, չափի պարագա երկրորդական նախադասությունների իմաստակառուցվածքային առանձնահատկությունները: 2.Նպատակի և պայմանի պարագա	Հանձնարարված գրականության մշակում և դասախոսական տեքստի յուրացում:		

		երկրորդական նախադասությունների իմաստակառուցվածքային առանձնահատկությունները: 3.Պատճառի, հիմունքի, զիջման և հետևանքի պարագա երկրորդական նախադասությունների իմաստակառուցվածքային առանձնահատկությունները: 4.Գլխավոր նախադասությանը հետևանքի նշանակությամբ լրացնող երկրորդական նախ. կառույցներ: 5.Գլխավոր նախադասությանը հարակցական նշանակությամբ լրացնող երկրորդական նախադասություններով կառույցներ:			
8.	Նախադասությունների կապակցումը խոսքաշարում: 4. Ուղղակի խոսք, նրա շարադասությունը և կետադրությունը: Ուղղակի խոսքի փոխակերպումը անուղղակի խոսքի:	1.Համաստորադասությամբ բարդ ստորադասական նախադասություն;2.Ենթաստորադասությամբ բարդ ստորադասական նախ.: 3.Խառը տիպի բարդ ստորադասական նախադասություն:			

9.	Բարդ ստորադասական նախադասությունների փոխակերպումը պարզի:	Բարդ ստորադասական նախ. փոխակերպելիս կատարվող կառուցվածքային փոփոխությունները:	Հանձնարարված գրականության մշակում և դասախոսական տեքստի յուրացում:		

12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

հ/հ	Ինքնուրույն աշխատանքի թեմաները	Ուսումնասիրվող հարցեր	Աշխատանքի տեսակը[7]	Ներկայացման ժամկետները	Ստուգման ձևը	Գրականություն[8]
1.	Գեղարվեստական գրականությունից դուրս գրել բարդ նախադասություններ և բնութագրել դրանց բաղադրիչներիկապակցման եղանակները, միջոցները, քերականական հարաբերությունների բնույթը:	Շարահյուսական կապակցման եղանակներ, միջոցներ, քերականական հարաբերությունների բնույթ:	20-21-րդ դդ. Հայ արձակ՝ ըստ ընտրության:	Սեպտեմբեր-հոկտեմբեր:	գրավոր, բանավոր քննարկում;	Գ. Գարեգինյան, Ժամանակակից հայոց լեզու: Բարդ նախադասություն, 1984թ. Դասընթացի դասախոսություններ:

[7] Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը:
[8] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն:

2.	ԱՐԵՎԱԿ-ից դուրս գրել բարդ համադասական նախադասություններ, կազմել դրանց գծապատկերները և նշել իմաստային տեսակները:	Համադասական կառույցների բաղադրիչ նախադասությունների իմաստաքերականական հարաբերությունների հարցեր:	ԱՐԵՎԱԿ	հոկտեմբեր, նոյեմբեր	գրավոր, բանավոր վերլուծություն:	Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, 2003թ. Ա. Պապոյան, Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, 2004թ.
3.	ԱՐԵՎԱԿ-ից դուրս գրել բարդ ստորադասական նախադասություններ, կազմել դրանց գծապատկերները և նշել իմաստային տեսակները:	Ստորադասական կառույցների բաղադրիչ նախադասությունների կառուցվածքային, իմաստային և քերականական հարաբերությունների հարցեր:	ԱՐԵՎԱԿ	Նոյեմբեր, դեկտեմբեր	գրավոր, բանավոր վերկուծություն:	Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, 2003թ. Ա. Պապոյան, Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, 2004թ.

13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում[9]

Ռեսուրսի անվանումը	Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում)
Լսարան (հատուկ կահավորմամբ)	
Նյութեր լաբորատոր աշխատանքների համար	
Սարքեր, սարքավորումներ	Էլ. Գրատախտակ, համակարգիչներ:
Համակարգչային ծրագրեր	powerpoint

[9] Նշվում են սարք-սարքավորումների, համակարգչային ծրագրերի նկարագրությունները և քանակը, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար:

14. Գնահատում

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի[10]:

14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում

Դասընթացն ամփոփվում է քննությամբ:

Դասընթացն ամփոփվում է կիսամյակի 2 **գրավոր** քննության և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքների հանրագումարային միավորով:

14.3. Հարցաշար (ըստ ծրագրի)

Ամփոփիչ քննության հարցաշար

1. Բարդ նախադասության բնութագիրը: Անցողիկ կառույցներ:
2. Նշութակիր կամ զոդվածով և աննշույթ կամ շարահարությամբ բարդ նախադասություններ:
3. Մասնատունակ և անմասնատունակ բարդ նախադասություններ:
4. Բաղադրիչների շարահյուսական հարաբերությունները բարդ նախադասության կազմում:
5. Բարդ համադասական նախադասության բնութագիրը;
6. Համադաս բաղադրիչների իմաստային հարաբերությունները:
7. Բարդ ստորադասական նախադասության բնութագիրը:
8. Ստորադաս բաղադրիչների կարգային և գործառական խմբավորումները. դրանց տիպաբանությունը:
9. Հարաբերիչ և հարաբերյալ:

---

[10]«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 30.062022թ.):

10. Գոյականական ստորադաս բաղադրիչներ՝ ենթակա ստորադաս, ստորոգելի ստորադաս:
11. Գոյականական ստորադաս բաղադրիչներ՝ հատկացուցիչ և բացահայտիչ ստորադասներ:
12. Խնդիր ստորադաս բաղադրիչներ:
13. Վերաբերության, անջատման, մատուցման, միասնության և այլ անուղղակի խնդիր ստորադաս բաղադրիչներ:
14. Տեղի, ժամանակի պարագա ստորադաս բաղադրիչներ:
15. Ձևի, չափի պարագա ստորադաս բաղադրիչներ:
16. Նպատակի և պայմանի պարագա ստորադաս բաղադրիչներ:
17. Պատճառի, հիմունքի, զիջման և հետևանքի ստորադաս բաղադրիչներ:
18. Ածականական ստորադաս բաղադրիչներ. որոշիչ ստորադաս բաղադրիչ:
19. Մակբայական ստորադաս բաղադրիչներ:
20. Պարագա ստորադաս բաղադրիչներ:
21. Տեղի, ժամանակի պարագա ստորադաս բաղադրիչներ:
22. Ձևի, չափի պարագա ստորադաս բաղադրիչներ:
23. Նպատակի և պայմանի պարագա ստորադաս բաղադրիչներ:
24. Պատճառի, հիմունքի և զիջման ստորադաս բաղադրիչներ:
25. Հետևանքի ստորադաս բաղադրիչ:
26. Ամբողջ գլխավորին լրացնող ստորադաս բաղադրիներ:
31.Ուղղակի խոսք:
32. Փոխակերպումներ. բարդ նախադասության փոխակերպումը պարզի. ուղղակի խոսքի փոխակերպումն անուղղակիի և հակառակը:

<u>Ա) 1-ին ընթացիկ քննություն (կիսամյակի 9-10 շաբաթվա ընթացքում)</u>

- **Ընդգրկված թեմաները.**

1.Բարդ նախադասության բնութագիրը,
2.Բարդ համադասական նախադասության բնութագիրը,
3. Բարդ ստորադասական նախադասության բնութագիրը:
4.Նախադասության գլխավոր անդամներին փոխարինող և գոյականական անդամի լրացում երկրորդականներով բարդ կառոյցներ:

- **Ընդգրկված հարցեր.**

1. Բարդ նախադասության բնութագիրը: Անցողիկ կառույցներ:
2. Նշութակիր կամ զոդվածով և աննշույթ կամ շարահարությամբ բարդ նախադասություններ:
3. Մասնատունակ և անմասնատունակ բարդ նախադասություններ:
4. Բաղադրիչների շարահյուսական հարաբերությունները բարդ նախադասության կազմում:
5. Բարդ համադասական նախադասության բնութագիրը;
6. Համադաս բաղադրիչների իմաստային հարաբերությունները:
7. Բարդ ստորադասական նախադասության բնութագիրը:

8. Ստորադաս բաղադրիչների կարգային և գործառական խմբավորումները. դրանց տիպաբանությունը:
9. Հարաբերիչ և հարաբերյալ:
10. Գոյականական ստորադաս բաղադրիչներ՝ ենթակա ստորադաս, ստորոգելի ստորադաս:
11. Գոյականական ստորադաս բաղադրիչներ՝ հատկացուցիչ և բացահայտիչ ստորադասներ:

Բ) 2-րդ ընթացիկ քննություն (կիսամյակի 19-20 շաբաթվա ընթացքում)

- **Ընդգրկվող թեմաները.**

1.Բայական անդամի լրացում երկրորդական նախադասություններով կառույցներ:
2.Բազմաբարդ ստորադասական նախադասություններ:
3. Փոխակերպումներ:

- **Ընդգրկված հարցեր.**

1.Խնդիր ստորադաս բաղադրիչներ:
2.Վերաբերության, անջատման, մատուցման, միասնության և այլ անուղղակի խնդիր ստորադաս բաղադրիչներ:
3. Տեղի, ժամանակի պարագա ստորադաս բաղադրիչներ:
4.Ձևի, չափի պարագա ստորադաս բաղադրիչներ:
5.Նպատակի և պայմանի պարագա ստորադաս բաղադրիչներ:
6.Պատճառի, հիմունքի, զիջման և հետևանքի ստորադաս բաղադրիչներ:
7. Ածականական ստորադաս բաղադրիչներ. որոշիչ ստորադաս բաղադրիչ:
8.Մակբայական ստորադաս բաղադրիչներ:
9. Պարագա ստորադաս բաղադրիչներ:
10.Տեղի, ժամանակի պարագա ստորադաս բաղադրիչներ:
11. Ձևի, չափի պարագա ստորադաս բաղադրիչներ:
12.Նպատակի և պայմանի պարագա ստորադաս բաղադրիչներ:
13. Պատճառի, հիմունքի և զիջման ստորադաս բաղադրիչներ:
14.Հետևանքի ստորադաս բաղադրիչ:
15.Ամբողջ գլխավորին լրացնող ստորադաս բաղադրիներ:
16.Ուղղակի խոսք:
17.Փոխակերպումներ. բարդ նախադասության փոխակերպումը պարզի. ուղղակի խոսքի փոխակերպումն անուղղակիի և հակառակը:

14.4. Գնահատման չափանիշները[11]

- Տեսական գիտելիքները ստուգվում են գործնական պարապմունքների ընթացքում կատարված հարցումների, ինքնուրույն աշխատանքների և ստուգարքների միջոցով:
- Գործնական աշխատանքները՝ չորս ընթացիկ ստուգում՝ 10-ական միավոր գնահատմամբ:
- Ինքնուրույն աշխատանքը՝ երկու հարցում՝ 10-ական միավոր գնահատմամբ:

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԻՉ

Մասնագիտություն՝ 011301.00. 6 Ընդհանուր մանկավարժություն
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ 011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա

Որակավորման աստիճան՝ Մանկավարժության բակալավր

Վանաձոր 2023

Առկա ուսուցման համակարգ

Դասընթացի թվանիշը, անվանումը	ՀԼԳ/բ-165 «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ (ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ)»			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	4 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	4-րդ տարի, 1-ին կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	42	Դասախոսություն	22
			Գործնական աշխատանք	20
	Ինքնուրույն	78		
	Ընդամենը	120		
Ստուգման ձևը	Ընթացիկ քննություն			
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է մասնագիտական հիմնարար գիտելիքներով, տեսական և գործնական-կիրառական կարողություններով և հմտություններով ապագա ուսուցչին, գիտնական-հետազոտողին զինելը:			
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. *Գիտելիք* Բարդ նախադասության բաղադրիչների շարահյուսական հարաբերությունների դրսևորման եղանակներն ու միջոցները, համադասական և ստորադասական նախադասությունների կառուցվածքային հատկանիշները, դրանց դասակարգման սկզբունքները: *Հմտություն* Տարբերակել պարզ և բարդ նախադասությունները, բնութագրել բարդ նախադասության հատկանիշները, առանձնացնել բաղադրիչների միջև շարահյուսական հարաբերությունների երկու տարատեսակները՝ համադասություն և ստորադասություն, որոշել նախադասության կառուցվածքային տիպերը և ստորադաս բաղադրիչների բնույթը: *Կարողունակություն*			

	Բարդ համադասական և ստորադասական նախադասությունների դասակարգմանը, պարզ նախադասության անդամներին հարաբերակից ստորադաս բաղադրիչով բարդ նախադասությունների կապակցման միջոցներին, տարբեր կառուցվածքի նախադասությունների գծագրավորմանը, այլև հանձնարարված բազմաճյուղ գծագրերով բախադասություններ կառուցելու հմտությանը, նաև տեքսի կառուցվածքի մեկնաբանությանն ու, ի վերջո, ազատորեն շարադրելու, տեքստ կառուցելու հմտություններին ու նրբություններին:
Դասընթացի բովանդակությունը	Բարդ նախադասությունը և նրա կառուցվածքը: Բարդ համադասական նախադասություն: Միավորական հարաբերությամբ բարդ համադասական նախադասություններ: Ներհակական, տրոհական, հավելական հարաբերությամբ բարդ համադասական նախադասություններ: Բարդ ստորադասական նախադասության կառուցվածքը և իմաստային առանձնահատկությունները: Բարդ ստորադասական նախադասության տեսակներն ըստ շարահյուս. փոխհարաբերության: Նախադաս. գլխավոր անդամներին փոխարինող երկրորդ. նախադաս.: Նախադաս. երկրորդ. անդամներին փոխարինող երկրորդ. նախադաս. գոյականական անդամի լրացում երկրորդ. նախադասություններ: Բայական անդամի խնդիր լրացում երկրորդ. նախադասություններ: Բայական անդամի լրացում երկրորդ. նախադասություններ: Ամբողջ գլխավոր նախ. լրացնող երկրորդական նախադասություններ: Բայական անդամի լրացում երկրորդ. նախադասություններ: Ամբողջ գլխավոր նախ. լրացնող երկրորդական նախադասություններ:
Գնահատման մեթոդները և չափանիշները	• Տեսական գիտելիքները ստուգվում են գործնական պարապմունքների ընթացքում կատարված հարցումների, ինքնուրույն աշխատանքների և ստուգարքների միջոցով: • Գործնական աշխատանքները՝ չորս ընթացիկ ստուգում՝ 10-ական միավոր գնահատմամբ: • Ինքնուրույն աշխատանքը՝ երկու հարցում՝ 10-ական միավոր գնահատմամբ:
Գրականություն	**Պարտադիր**-Ս. Աբրահամյան, Հայոց լեզու, շարահյուսություն, 2004 Ս.Աբրահամյան, Ն.Պառնասյան, Ժամանակակից հայոց լեզու, 1976: Գ.Գարեգինյան, Ժամանակակից հայոց լեզու. Բարդ նախադասություն, 1984: Ա.Պապոյան, Խ.Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի

	շարահյուսություն, 2004: **Լրացուցիչ**-Ա.Պապոյան, Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, 2004: Լ. Թելյան, Բազմաբաղադրիչ բարդ նախադասությունների դասակարգման շուրջ, համացանցային ռեսուրս: